

Միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին

15.04.2015թ.

Այսօր ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության և մշակույթի վարչության պետ Հ. Ալեքսանյանը Սյունիքի միջնակարգ դպրոցում մասնակցել է Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառմանը:

Միջոցառումն սկսվեց տերունական աղոթքով, որից հետո աշակերտները ներկայացրեցին 20-րդ դարի մեծագույն ոճիրի մասին պատմող դրվագներ:

Մասնավորապես նշվեց, որ ինչպիսի բառերով էլ աշխարհը ճանաչի ոճրագործությունը, միևնույն է, հայ ժողովրդի հիշողության մեջ հավերժ կմնա իր նախնիների արյունոտ էջը:

Միջոցառմանը ներկա էր նաև «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ -ի գլխավոր տնօրեն Հրաչ Զաբրայանը, ում ֆինանսավորմամբ կրթօջախում իրականացվել են տարբեր բնապահպանական ծրագրեր:

Միջոցառման ավարտից հետո Հ. Ալեքսանյանը և հյուրերը «Հայոց ցեղասպանության 100 ամյակին >> նվիրված միջոցառումների շրջանակում դպրոցամերձ այգում կատարեցին ծառատունկ:

